# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՏՎՅԱԼ ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ,ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՆՈՒՑՄԱՆ ԳԾԱԳՐԵՐԸ:

ԸՍՏ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ ԴԱՍՎՈՒՄ ԵՆ;

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ; ՊԱԼԱՏՆԵՐԻ ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ, ՈՒԺԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ; ՕՊԵՌԱՑԻՈՆ,ՎԵՐԱԿԵՆԴԱՆԵՑՄԱՆ,ԾՆԱՐԱՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ,ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ՎԹԱՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ,ՎԵՐԵԼԱԿԻ,ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ:

ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԾԻՑ:

1ՀԱՐԿՈՒՄ, ԷԼ.ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՍԵՆՅԱԿՈՒՄ,ՏԵՂԱԴՐՎՈՒՄ Է;ВРУ-21Λ(200+200)-313 ՏԻՊԻ ՆԵՐԱՆՑՄԱՆ ՍԱՐՔ ABP -ՆԵՐՈՎ, ԱՎՏՈՄԱՏ ՀՈՍԱՆՔԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ:ՆԱԽԱԳԾՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՏԵՂԱԴՐԵԼ ԴԻԶԵԼ ԳԵՆԵՐԱՏՈՐ:ՑԱՆՑԱՅԻՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԽԱՓԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՎՏՈՄԱՏ ՄԻԱՆՈՒՄ Է ԴԻԶԵԼ ԳԵՆԵՐԱՏՈՐԸ, ՈՐԸ ՍՆՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ: ՆԵՐԱՆՑՄԱՆ ԲԱՇԽԻՉ ՍԱՐՔԻՑ ՄԱԳԻՍՏՐԱԼ ԳԾԵՐ ԵՆ ՏԵՂԱԿԱՅՎՈՒՄ ԴԵՊԻ ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ , ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ,ՕՊԵՌԱՑԻՈՆ,ՎԵՐԱԿԵՆԴԱՆԵՑՄԱՆ,ԾՆԱՐԱՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ,ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՎԹԱՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ,ՎԵՐԵԼԱԿԻ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ:

ԷԼ.ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ВРУ-21Λ ՆԵՐԱՆՑՄԱՆ ՍԱՐՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԵՌԱՖԱԶ ՀԱՇՎԻՉՆԵՐՈՎ:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԱԳԻՍՏՐԱԼ ԳԾԵՐԻ,ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆՑԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ВВГнгFRLS ՏԻՊԻ ՉՎԱՌՎՈՂ ՄԱԼՈՒԽՈՎ ,ԽՈՂՈՎԱԿԻ ՄԵՋ, ԿԱԽՈՎԻ ԱՌԱՍՏԱՂԻ ՄԵՋ,ԿԱՄ ՊԱՏԵՐԻ ՄԵՋ ՍՎԱՂԻ ՇԵՐՏԻ ՏԱԿ ԹԱՔՆՎԱԾ:

ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՐՈՑԱԿՆԵՐԻ ՑԱՆՑԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ВВГнгFRLS 3X2.5 ՏԻՊԻ ՉՎԱՌՎՈՂ ՄԱԼՈՒԽՈՎ ,ԽՈՂՈՎԱԿԻ ՄԵՋ, ԿԱԽՈՎԻ ԱՌԱՍՏԱՂԻ ՄԵՋ,ԿԱՄ ՊԱՏԵՐԻ ՄԵՋ ՍՎԱՂԻ ՇԵՐՏԻ ՏԱԿ ԹԱՔՆՎԱԾ:

ԲՈԼՈՐ ԷԼ.ԽՐՈՑԱԿՆԵՐԸ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏԱԿՏՈՎ ԵՆ: ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ; ՕՖԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀԱՏԱԿԻՑ- 0.8մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ; ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ -1.2 մ, ԽՈՀԱՆՈՑՈՒՄ,ՊԱԼԱՏՆԵՐՈՒՄ - 1.3մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ,

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ՎԹԱՐԱՅԻՆ,ԷՎԱԿՈՒԱՑԻՈՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԼՈՒՍԱԿԱՆԵՐ:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ,ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ,ԽՈՀԱՆՈՑՈՒՄ - Impala TBS162

ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ - ΛΒΟ13-4X18տիպի(АРМСТРОНГկախովի առաստաղի համար)

ՊԱԼԱՏՆԵՐՈՒՄ- ΛΒΟ 08-1X36+2X18 էներգախնայող լյումինեսցենտ լամպերով , վերևի և ներքևի լույսերով,խրոցակով,անջատիչով,բուժ.քրոջ կանչի կոճակով:

ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆՈՒՄ,ԾՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ,ՌԵԱՆԻՄԱՑԻԱՅՈՒՄ -GEA-4X18 ՏԻՊԻ ԱՌԱՍՏԱՂԻ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՉԵԿՈՂ,ԵԼՈՒՍՏ ՉՈՒՆԵՑՈՂ ԼՈՒՍԱԿԱՆՆԵՐՈՎ:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է-ΛΠΟ13-4X18 ՏԻՊԻ ԼՈՒՍԱԿԱՆՆԵՐՈՎ:

"ԵԼՔ" ԷՎԱԿՈՒԱՑԻՈՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԱԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐ ՈՒՆԵՑՈՂ ԼՈՒՍԱԿԱՆՆԵՐՈՎ:

ՍԱՆ.ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ ,ԷԼ.ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ,ԷԼ.ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՈՒԺ.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍՆՈՂ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ УЗО ՏԻՊԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔԵՐ 30մԱ ՀՈՍԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ ԵՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՆՈՄԻՆԱԼ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ,ԻՆՉԸ ՀՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՄԱԿՆԻՇԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ:

ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆՈՒՄ ,ԾՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ,ՌԵԱՆԻՄԱՑԻԱՅՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՊԱՐԱԳԾՈՎ 100-150ՄՄ ՀԱՏԱԿԻՑ ԲԱՐՁՐ ՏԵՂԱԿԱՅՎՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՇԻՆԱ,ՈՐԻ ԻՋԵՑՈՒՄԸ ԴԵՊԻ ՀՈՂԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է 40X4ՄՄ ՏՐԱՄԱԳԾԻ ՑԻՆԿԱՊԱՏ ՇԵՐՏԱՊՈՂՊԱՏՈՎ 25մ ՄԵԿ,ԱՌՆՎԱԶՆ 2 ՏԵՂԻՑ: ՀՈՂԱՆՑՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼ50X50X5 ՉԱՓԻ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՊՈՂՊԱՏՈՎ,ՄԻԱՑՈՒՄԸ ԻՐԱՐ 40X4մմ ՇԵՐՏԱՊՈՂՊԱՏՈՎ:ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՍԵՂԱՆԸ,ԲՈԼՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ,ԲՈԼՈՐ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԸ ՄԻԱՑՎՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՇԻՆԱՅԻՆ:

ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆԻ ,ԾՆԱՐԱՆՆԵՐԻ,ՌԵԱՆԻՄԱՑԻԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՄ ЭЩР-0-6Т-ВС ՏԻՊԻ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ:ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆՈՒՄ 2ՎԱՀԱՆԱԿ ՄԵԿ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ,ՈՐՈՆՔ ՄԻԱՑՎՈՒՄ ԵՆ ՑԱՆՑԻՆ ԲԱԺԱՆԱՐԱՐ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՓԱԹՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ:ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՏԱԿԻՑ 1.6Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՊԱՏԻՆ:

ЭЩР-0-6Т-ВС ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ 6 ՀԱՏ ՄԻԱՖԱԶ ԵՎՐՈԽՐՈՑԱԿ 16Ա ՀՈՍԱՆՔԻ ՀԱՄԱՐ,3 ԱՎՏՈՄԱՏ ԱՆՋԱՏԻՉ 32Ա ՀՈՍԱՆՔԻ ՀԱՄԱՐ,1ՀԱՏ ԵՌԱՖԱԶ ԵՎՐՈԽՐՈՑԱԿ,1 ՀԱՏ ԵՌԱՖԱԶ ԱՎՏՈՄԱՏ ԵՎ 3 ՀՈՂԱՆՑՄԱՆ ՍԵՂՄԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԱԳ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՄՆԱՑԱԾ ՀԱՏՈՒԿ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ЩРМ-03 ՏԻՊԻ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ 3ՀԱՏ ՄԻԱՖԱԶ ԵՎՐՈԽՐՈՑԱԿՆԵՐՈՎ ԵՎ 2 ՀԱՏ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՍԵՂՄԻՉՈՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՃՇՏՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է TN-C-S ՏԻՊԻ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՍԻՍՏԵՄ: ԿՐԿՆԱԿԻ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏՈՒՐԸ ՀԱՎԱՔՎՈՒՄ Է 50X50X5 մմ, L=2.5 մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՊՈՂՊԱՏՈՎ,ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ 40 X 4 ՇԵՐՏԱՊՈՂՊԱՏՈՎ: ՆԱԽԱԳԾԻ ԲՈԼՈՐ ԷԼ.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՊՈՏԵՆՑԻԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ:ԴՐԱ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԻ ՍԱՐՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԳԼԽԱՎՈՐ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՇԻՆԱ, ՈՐԻՆ ՄԻԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏՈՒՐԸ,ԶՐՈՅԱԿԱՆ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԳԻԾԸ ( PE-N ) ,ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԳԻԾԸ ( PE ) ,ՋԵՌՈՒՑՄԱՆ,ԳԱԶԱՏԱՐԻ,ՋՐԱՏԱՐԻ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ,ՇԵՆՔԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԱՄՐԱՆՆԵՐԸ: ԲՈԼՈՐ ԷԼ.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆԵՐՄԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՉ ՀՈՍԱՆՔԱՏԱՐ ՄԱՍԵՐԸ ՀՈՂԱՆՑՎՈՒՄ ԵՆ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ՕԴԱՓՈԽՈՒՓՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄ:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «ԱՐԽԻ ԷՎՐԻԿԱ» ՍՊԸ | ՆԳՎ | Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | | ՔԱՆԱՔԵՌ - ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | | |
| | ՆԱԽԱԳԾՈՂ | Ռ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | ԷԼԵԿՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | | ԱՆ | E/S-2 | 14 |
| | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ « ՔԱՆԱՔԵՌ - ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ » ՓԲԸ | | | ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | « ԱՐԽԻ ԷՎՐԻԿԱ » ՍՊԸ լիցենզիա № 13687 | | |